Եւ զուարԹ ակամբ մերԹ յայս ոք մերԹ յայն ակն արկեալ ասէր .
« Բուակաւն համարեսջիք , տեարք , ըզկերակուրքըս բանակի ,
Եւ ըզսակաւ զաշամուերդ համեմեսջէ զըւարԹուԹիւն » :
Զայն հաճուԹեան ի վրանն հընչեաց , եւ ծառայք միրք զըսպասն ածին .
Ջերաջերմըն կարկանդակ ի համբարոց ընտիր նաշհոյ ,
Հաւուց վայրի եւ ընտանեաց եւ երընջոց շամփրախորով ,
Եւ ընդ հացի զօրաւորաց ըստ գերմանիկ սովորուԹեան
Գայր յետոյ ցանկալին ոսկետեսակ խորիսխ մեղու .
Այլք զըստումանս ազնիւ գինեաց յերախանին չուրջ բերէին
Ըղլայնափոր լընուլ բաժակըս ձոյլ՝ ըզմէն կոչնականի .
Եւ ըմպէին զըւարԹացեալք ըստ յագ՝ զօգուտ ժամ գիշերոյն .

Dann die tapferen Helden umher mit feurigen Blicken,
Setzte sich hin, und begann: « Fürwahr, ich wähnte: verrosten
Müsste mein tüchtiges Schwert in der dunkelen Scheide für immer,
Und ich daheim Geschriebenes nur aus dem Munde des Mönchleins
Hören: von Thaten des Kriegs und euern errungenen Lorbern!
Aber als gütigen Herrn erwies dem alten Gesellen
Haug der Kaiser sich stets: sein dacht' er auch jetzo mit Huld nur.
Kaduscha sah ich zuvor an der Spitze des reisigen Volkes
Treulos flieh'n; er gab, hohnlachend, den kurzen Bescheid mir:
Iwan weih' er sein Schwert; euch wünsch' er Glück in dem Siegslauf. »
All' aufhorchten mit Staunen dem Wort; doch glühendes Roth fuhr
letzo mit wechselndem Weiss in die Wangen des Königs von Ungern,
Und ihm blitzte der Zorn aus den halbgeschlossenen Augen;
Dennoch besann er sich schnell; both dann die Rechte Matthias
Von Trentschin, und sprach: « Du sey des Heeres Gebiether
Mir hinfort! Obgleich vom Geschlechte der Kunen geboren
Mir die Mutter ward; ich die Liebe des Kun's aus der Brust ihr
Sog als wimmerndes Kind, und, zum Jüngling gereift auf dem Todbett

Գամ՝ քան ըզգամ՝ զօրանայր գրոյցն ու աշխոյժ շարժումն ի խորանին .
Իսկ կայսր հայէր ժըմտելով ընդ Տուրինգեանն ասպետ Միւլլեր ,
Որ յակըմբի խրախճանին յար անկանէր ըզկատակօք
Եւ զարգիս առ Փրետրիկ Նորիկթլացի հարցաքանէր .
« Ազէ պատմեա , տէր բերդապետ , զինչ անցին անցք ի Բասիլեա
Ցորժամ չետուր առ գիտնականն այն ըզլուծայն հաւբերդունի » ։
Նա շառագնեալ զիմօք պատմէր . « Ի յերկարել պատերազմին
Առ Բասիլեաւ գիտնական ոմն յԱրգենտորայ՝ զիրըն մատեան
Որ յաղագս Հռովմայեցւոց և Գերմանաց Պատերազմին
Եւ վարուց Զօրլս վարելոյ՝ մատուցանէր ցապետ Ռոդոլփ ։
Իսկոյն նա զրամ՝ ոսկի , և ոսկի շղթայ կախէր զուլամբ նորին ,
Եւ փոյթ ընդ փոյթ հետաքըննեալ յուզէր ըզթերթըս մատենին .
Մինչ ինք –նորին քեռորդի– ըստգըտանէր զոգ իմն ըզնա՝
Թէ զոսկին՝ պարտ ժողովրդեան էր եւ յերկար մարտի պահել .
« Արդ լըւարուք , ասէր , զի՞րդ յանդիմանեաց զիս Ռոդոլփ .
Մեծագոյն վարձս ասէ արժան է իմաստնոյ առն ընծայել
Որ պատմէ գործս արժանափառս , ու ի նոյն նախանձ զայլս յորդորէ ։

Noch ihr schwur auf die pochende Brust: so will ich den, Unger,
Reuig erwägend die Schuld der dauernden Geistesverblendung,
Vorzieh'n jetzt dem Treulosen, der mich verliess, und nicht schmähen
Fürder das edlere Blut des throngebornen Erzeugers. »
Iener erhob sich mit Würde vor ihm, und beugte die Scheitel,
Schweigend, zum Dank. Doch, als im schlachtentscheidenden Kriegsrath
Für den bald aufdämmernden Tag Alljedes besorgt war,
Sass der Kaiser im Heldenkreis' bei dem fröhlichen Nachtmahl
Heiteren Blicks, und sprach, umschauend, zu Diesem und Ienem:
« Lasst euch Lagerkost, ihr Herrn, genügen: für jetzt noch
Sind der Gerichte nicht viel', doch würze die wenigen Frohsinn! »
Lautes Gemurmel erscholl in dem Zelt. Geschäftige Diener
Reichten die Speisen herum: das dampfende Muss, aus dem Vorrath
Zartesten Mehles gekocht; dann wildes und zahmes Geflügel,
Wohlgebraten am Spiess mit dem Rücken des jährigen Rindes,
Und, zum kräftigen Brote zuletzt, der Sitte geziemend,
Goldenen Honigseim, wie solcher dem Deutschen ersehnt war.
Andere trugen die Fluth des köstlichen Weins in den Krügen

Եւ ժամանակ թէ նմա ներէր՝ յօժար ի գիրըս թարթափէր.
Յօժարագոյն ծախէր ըղձանձ փառն այսպիսեաց տոկուն երկոց
Փառն ի վերայ տըգիտաց եւ անարի զօրաւարաց »։
— « Եւ կարի քաջ, յաւել առել Միւլլէր, չէր նա յաչս ոսոխաց
Եղէգըն զազփազփուն որ շարժիցին ի գոյդն հողմոյ։
Արդ լըւարուք. Ատելութիւն անհաշտ ընդդէմ Հաւաբերդոյ
Յիւր ազգայնոյն Տօզբերգունոյ Արքաբերդեանն այն ժառանգեաց.
Արի արամբք եւ ոխութեամբ պաշարէաք զԲզնակ քաջ բարձր ամուր։
Հընչէր ճայթիւն յանկարծակի, զի շաչելով հատորք վիմաց
Բաղխէին ի հաստաբեստ ճօպանաձիգ ճարպ բաղըստրաց,
Զոր քաջարուեստ ճարտարն Երմէլ ի Բոթ հնարեաց իմաստութեամբ.
Նաեւ Կատուք հօղածածուկք ի պարիսպս անդըր մատուցեալք
Պաշտպանէին ի թըշնամեաց նետաձըգաց զզօրըն մարտիկ,
Որ զորմնաքանդ ծանրակուռ նիզակն տեղայր տիւ եւ գիշեր.
Հարիւր ոտն ի բարձրութիւն կանգնէր գեղան ըստուար կաղնոյն
Զոր ճարտարին ընտրեալ կազմեալ էր ամրակուռ երկաթապատ.
Քարշէին արք կարչընրուղք, որոտային պարիսպք բախեալք.

Freundlich herum, und füllen den Bauch der räumigen Humpen,
Die vor jeglichem Gast', aus schimmerndem Erze getrieben,
Standen, nach Herzenslust bei dem Nachtgelage zu trinken.
Lauter und feuriger ward das Gespräch, und bewegter das Kriegszelt.
Aber der Kaiser sah mit lächelndem Wink nach dem Ritter
Müller, dem Zürcher, der im Kreise der Fröhlichen, immer
Heiteren Scherzes gedacht', und jetzt zu Friedrich von Nürnberg
Also begann: « Herr Burggraf, sprecht: wie war's denn vor Basel
Mit dem Gelehrten, da Ihr ihm Habsburgs Pfennig nicht gönntet? »
Iener kündete nun mit hocherröthenden Wangen:
Wie in dem dauernden Kampf vor Basel dem edelen Ritter,
Rudolph, both sein Werk: « Von den Kriegen der Römer und Deutschen —
So auch des Feldherrn Wissenschaft » ein Gelehrter aus Strassburg;
Iener ihm schnell ein Goldstück gab mit der goldenen Kette,
Die von dem Hals ihm hing, und d'rauf, voll Gier, in den Büchern
Blätterte; wie er — der Schwester Sohn, ihm solches verwiesen,
Da viel Geldes das Volk ihn kostete, viel auch der Kriegszug
Fortan heischt'. « Ach hört, » so erzählt' er dann, « wie mich Rudolph

Ուր ուրեմն ի մահարձանս անգըր մարտկոց վարեալ մատեար
Խարխարելով ու ի բերդամէջն հասելով գքակտեալ քարինս ,
Եւ գընտակըս տեղալով ծծըմբավառս եւ կպրաձիւթ .
Յետ վեցամսեայ կորովի դիմադրութեան ժուժալ ամրին
Եհաս ձըմեռըն կարեձմեռն , եւ թաղեցան բազումք ի մէնջ .
Եւ բազումք ի գիշերի թօթափէին վատք դասալիք .
Այլ ոչ կասէր արին Ռոդոլփ , զ'որ ոսոխաց բասրեալ ըզտոկ՝
Զըկունըս կենդանիս արկանէին ի բանակ մեր .
Նա կայր գոչէր . « Մի' վըհատիք , մեր է Ոգնակ » . եւ եղեւ խոկ :
Գիշերի գնդաւ փոքու 'նդ խրամատս եմուտ նա պարըսպին ,
Ինքնին երաց ըզդուռն , 'ի սուր մեք սուսերի զպահակն հարաք .
Եւ բերդն առեալ քանդեցաւ յակնարկել քաջ Հաւբերդունոյ » :
Հընչեաց անդէն ակումբն ամէն . « կեցցէ մեզ քաջն արանց յամայր » :
Յոր տրտումն ակն արկեալ՝ ասէր եւ ծաղկադեղ տէրն Ունդարաց .
« Բազդ յաջողեաց քեզ յաճախ . աչք քո զուարթագինք զայդ յայտ առնեն » .
— Ոչ այդպէս , միւսն ասէր . բազումս եւ իմ կըրեալ վիշտ է վըտանգի
Որպէս զայլս ի մահացուաց ի յեղյեղուկ կենացս ընթացք .

Schalt! « Der herrlichste Lohn, » so sprach er, « gebührt dem Gelehrten,
Der hochrühmliche Thaten beschreibt, und im Herzen den Muth weckt,
Sie zu vollbringen dereinst. Er sässe wohl selber mit Freuden
Ueber den Büchern, so ihm nicht die Zeit ermangelte; lieber
Spendet' er auch sein Gold auf ihn, der, dauernden Mühens,
Solche Schätze gehäuft, denn auf manchen untüchtigen Krieger. » [5])
« Wahrlich, » so fiel ihm Müller in's Wort, « kein wankendes Schilfrohr,
Das sich im Hauche des Windes bewegt, gewahrten die Gegner
Iemals an ihm, denn hört: der Regensberger vererbte
Auch an den Kraft von Toggenburg, der seines Geschlechts war,
Unversöhnlichen Hass g'en Habsburg. Feindlich umringten
Wir mit erlesenem Volk dort Uznach, die ragende Felsburg,
Und ein Krachen begann alsbald: denn laut und unzählbar
Flogen die Felsen nach ihr, von des Antwerks [6]) mächtigem Wurfbaum
Hingeschnellt, das Ermel in Roth, der treffliche Meister,
Sinnig zu bauen, verstand. Auch die Katzen, [7]) mit Erde bedecket,
Rasteten nicht, stets näher den Mauern gerückt, und die Krieger
Schirmend vor Feindesgeschoss, die im Sonnenlicht und im Nachtgrau'n

Ըզփորձ առեալ ագխոյց՝ քաջ եւ զայլոց կիրըս ճանաչեմ.
Այլ ուստայ ապաւինիլ յայն՝ որ հըսկէն ի մեր վերայ,
Եւ հաւատայ ի ճշմարիտ խոստմունս մերոյ Կենարարին.
Որ միայն առաջնորդէն մեզ ուղիղ յայս եւ ի յայն կեանս.
Գոհացայ ի բարիս, ժուժկալութեամբ տարայ չարեաց,
Զուղղութիւն սիրեցի. յանձն արարի Տեառն ըզշաւիղս իմ
Ու անդորր հայիմ ի գուբ շիրմին՝ ուստի յաւերժ ինձ ծագէ լոյս »:
Զայս ասելով խանդաղատեալ հայէր յորդին իւր ի յԱլբերդ,
Որ ի շրթունս հօրըն յակճիռս կացեալ եւ լայր սրտակաթեալ:
Ի լըռել ողջոյն վրանին, մեծաձայնեալ գոչեաց Ցոլակ.
« Հիմ այդպիսեօք անլուրջ բանիւք զզաւեշտ ընթրեացըս լուծանէք.
Վաղիւ զոռայ կոչէ զմեզ մարտ, եւ անդի տան բարբառք խնդից.
Ո՞րդեօք զարձցի, ո՞ ոչ. կամ ո՞յր բազմոց մնայցէ զատարկ
Ի միւսանգամ ընթրեացս ակումբ. այդ՝ ըստ բաղդի թարուցաւ մեզ.
Վայելեցէք արդ ըզվայրկեանս մինչչեւ խալառ անցեալս իցէ.
Ո՞ւր են զուսանք զուարթացուցիչք մեծամեծար խրախճանիս:
Աւաղիկ կան արտաքոյ եւ հրամանի ձերոյ մընան »:

Schwangen die furchtbare Wucht des mauerzertrümmernden Balkens.
Hundert Fuss aufragte der Stamm des mächtigen Eichbaums,
Den der Meister sich wählt', und mit Eisen die Stirn' ihm bewehrte.
Donnernd schlug er die Wand, von kräftigen Kriegern geschwungen.
Endlich rückten wir auch mit dem Ebenhoch[8]) an die Zinnen:
Schleudernd von ihm zermalmende Blöck' in die Mitte der Felsburg —
Auch mit Schwefel und Harz erfüllete, brennende Kugeln.
Doch ereilt' uns d'rauf der grimmige Winter: verderbend
Hielt sich die Burg sechs Monden schon mit erlesenem Streitvolk.
Viele begruben wir dort der Unseren; viele vermissten
Wir an dem Morgen oft, die feig entwichen bei Nachtzeit;
Doch nie wankte noch Rudolphs Muth. Da warfen die Gegner
Lebende Fische heraus in das Lager, als spotteten sie noch
Seiner Gewalt. Er rief: « Ermannt euch: unser ist Uznach! »
Also geschah's. Er drang bei Nacht mit wenigem Volk nur
Ein durch den Mauerbruch, und eröffnete herzhaft das Thor selbst.
Unserm würgenden Schwert' erlagen die Gegner, und alsbald
Fiel auch die Burg, zerstört, auf den Wink des Helden von Habsburg. »

— Յորմէ՞ ազգէ, յորմէ՞ երկրէ իցէ գուսանդ, եհարց Ռոդոլփ,
Զի քաջք յերգչաց ծանօթք են ինձ, եւ սիրելիք հիւրք իմ յաճախ.
Բազումք եկին ի Հաւաբերդ եւ մեծարեալք դարձան յինէն.
Հեշտալուրք էին յականջս իմ ձայնք մարդկանդ որ զուշ մոգեն,
Ձայն նոցա՝ եւ ձմերանի զալարս ածէ ցամաք մայրեաց,
Եւ զարնայնոյ ծաղիկ ի մարգ՝ զոր աշնայնոյն ազազեաց հողմն.
Լուսացայտ սփռէ աստղունս մառախլապատ յերկնից երեսս,
Ու ի զգայուն սիրտ մարդոյ դրդէ զխաստ չքնաղն հանդերձելոյ՝
Մինչ յաղխտից նա ներկայիս, էհէ՛, ընկճեալ եւ վարակեալ
Առ այն անդուլ կղկաթ կաթողի լեալ հառաչէ զաղտ:
Ո՛ն անդըր մայծ ըզպատուական հիւրդ ի ներքս ի յընթրիսս այս».
Փութացաւ նա ել արտաքս, ու անդրէն մըտեալ ասէ ցըռէրն.
« Զէ անծանօթ ի գուսանս՝ երգիչն Հոռնեկ Ստիրիացի,
Որ մինչ մանուկն էր՝ ի Գերմանս գնաց առ Վեռնէր եպիսկոպոս
Ի քաղաք Մոգունտիոյ, եւ անդ լըսէր Կարմրակեցոյն.
Այլ սիրտն ազդէր նըմա լինել հովիւ ըզգաստ հօտից Փրկչին.

Laut umtönt' ihn einhelliger Ruf: « Hoch lebe der Held uns! »
Doch nun sah ihn zugleich der blühende König der Ungern
Traulicher an, und sprach: « Stets bist du wohl glücklich gewesen?
Denn ein heiterer Geist wohnt dir in den freundlichen Augen. »
Iener begann: « Nicht also: denn vieles erduldet' ich seither,
Ander'n Sterblichen gleich, im wechselnden Laufe des Lebens;
Leidengeübt erkenn' ich das Mass auch der härtesten Leiden
Anderer; doch, ich lernete dem, was über uns waltet,
Frühe mich fügen; hab' treu an des Heilands Lehre gehalten.
Die uns gewiss, denn einzig wahr, hienieden und jenseits
Leitet zum dauerndcn Glück. Mit Dank genoss ich des Guten;
Setzte dem Schlimmen ein Ziel durch Geduld; stets ehrt' ich die Wahrheit;
Meine Wege befahl ich dem Herrn, und schau' in des Grab's Nacht
Ruhigen Blicks: mir winket aus ihr das ewige Lichtreich. »
Sagt' es, und sah, bewegt, nach Albrecht, seinem Erzeugten,
Der an den Lippen des Vaters hing, und weinte, hinüber.
Stiller wurd' es im Zelt, da rief mit umschallender Stimme
Lichtenstein: « Was soll uns der Ernst bei der fröhlichen Mahlzeit?
Morgen ruft uns die Schlacht mit donnerndem Laut', und des Frohsinns

Եւ քաջախնամ զամ մի հովուեալ, ապա զգրիչն իւր եւ ըղկընիկ՝
Եպիսկոպոսն յանձնեաց Նըմա, մինչեւ առ Տէր փոխեցաւ։
Ի հայրենիս ապա դառնայր Հոռնեկ, եւ սերտ ծանօթանայր
Ընդ քերդողին Տիկնայց-երգուի՝ որոյ պարծիմ ես որդի գոլ·
Եւ յետ մահու նորին՝ յարեալ յիս ի մարտի եւ հաշտութեան
Անդուլ ճըգամբ ի գեղեցիկ չափըս բանի վիպասանէ »։
Ցառաջ մատեաւ պըճըղնազգեաց Նըւիրականն երգիչ յուշիկ·
Ըզքնարըն քաջաձայն եդեալ սըլըրկիկ ուս ընդ անութ
Խորահայեաց խոնարհէր՝ շուրջ ակըմբին եւ նախ կայսեր։
Ցապուշ կրթէր Գերմանաց տէրն. ոչ անծանօթ զայրըն տեսեալ՝
Այլ ծերութեամբ կորաքամակ եւ յալեւոյթն այլափոխեալ։
Արդ ըրբջադէմ Նստեալ առ դրան վրանին ի ցած բազրոնակին,
Ամբարձ ըզքնարն, եւ ըղճարպուկ խաղացուցեալ մատունս ի լար՝
Սրտաթունդ հընչեցուցեալ ձայնս ի լռութիւն զվայրըն կրթեաց.
Եւ ի կուրծս ամենեցուն տայր հանդարտել զոգեկոչ շունչ՝
Մինչ ի Թրթռուն բախիւն լարիցն ըսկըսաւ զերգըն տօնական.

Iubel verhallt. Wer kehret, wer nicht? Wess' Sitz an dem Tisch hier
Leer ist bei'm künftigen Mahl: das steht uns zum Glück noch verborgen;
D'rum geniesset des Augenblicks, eh' er schwindet auf immer!
Soll diess herrliche Fest des Sängers ermangeln? Er harret
D'raussen nur eures Winks: der gemeinsamen Freude gedacht' ich. »
« Sage mir an, » sprach Rudolph jetzt, « wess' Landes und Volkes
Rühmt sich dein Sänger? Bekannt sind mir die Weisen der Meister:
Denn mir waren sie stets ersehnete Gäste; so mancher
Wallte zur Habsburg hin, und geehrt ging jeder von dannen.
Gierig horcht mein Ohr den zaubergewaltigen Männern:
Denn mit frischerem Grün bekleidet ihr Sang in dem Winter
Selbst, den entblätterten Wald, und mit Frühlingsblumen die Matten,
Die der herbstliche Wind versengt': auf den nebligen Himmel
Sä't er glänzende Stern' umher, und weckt in des Menschen
Fühlender Brust, gar mächtig die Ahnung der schöneren Zukunft,
Der hier unter dem Druck der Gegenwart, wie erstarret,
Ach, nach jener, so oft, mit inniger Liebe sich sehnet!
Eilt, und führt ihn herein den werthen Gast bei dem Mahl hier. »
Iener eilte hinaus; dann kehrt' er, und sagte dem Herrscher:

Գոռան գոչէն բուռըն մրրիկք, — Ի Թուխ լերինս ամպք կարկառին·
Հորնչէն վտակք, հեծէն մայրիք — Ի տարափոյ յորդ անձրևին·

Խոնջ յընդերկար Թափառանաց — Ըզհետ որսոց ի վեր և վայր
Հանգչէր անդէն ոմն յասպետաց — Յերիվարէն իջեալ ի վայր·

Յաչաց նորուն զըւարթագին — Յայտեն ճաճանչք արիական,
Ողջութիւն սէր և սեռն ոգին — Ի կապուտակ խըռում ական·

Ընդ կուտակեալ հայի ալիս՝ — Որք շառաչէն զհետ իրերաց
Խուսափելով անդառնալիս, — Եւ յիշէ զնու կենացս անդարձ·

Դափր հատանէ անդ երիվար — Եւ կաղկանձէ բարակն աչխոյժ
Զի չեգիտ որս զայն օր յանտառ, — Մինչդեռ յառնէ ասպետն ըզգոյշ

Ի չէն դառնալ և ի տուն իւր՝ — Ուր սիրելիք նըմա սպասեն·
Եւ ասադիկ բաղխին ի լուր — Գանչք զանգակի 'հեռաստանէն·

« Nicht unrühmlich bekannt ist Hornecks [9]) Name, des Sängers,
Der aus der Steyermark entspross, und in blühender Iugend
Fort nach Deutschland zog an den Hof des würdigen Bischofs,
Werner von Mainz, wo ihm Rotenburg zum Meister geworden.
Aber ihn drängte das Herz: ein redlicher Hirte der Schäflein
Seines Heilands zu seyn, und er weidete solche mit Sorgfalt,
Iahrlang, bis ihm die Feder zugleich und das Siegel der Bischof
Wieder vertraut'. Er starb, und Horneck kehrt' in die Heimath:
Erst dem Sänger des F r a u e n b u c h' s, [10]) dess' Sohn ich mich rühme,
Sich zum Frommen zu weih'n: dann mir, als jener gestorben:
Denn mit unsäglichem Fleiss, in zierlichem Reim die Geschichten
Schreibend, folgt er mir treulich nach im Krieg' und im Frieden. »
Doch nun trat im langen Talare der heilige Sänger
Leise herein. Er trug die tönende Harfe mit Vorsicht
Unter dem Arm, und grüsste die Schar — vor allen den Kaiser
Tief, und mit innigem Blick'. Erstaunt besann der Beherrscher
Deutschlands sich. Ihm schien: als hätt' er ihn früher gesehen;
Nur vom lastenden Alter gebeugt, und ergrauet an Haaren
Stand er, ein Fremdling, vor ihm. Da liess er mit freundlichen Mienen
Auf den niedrigen Stuhl am Zelteingange sich nieder;

Ի մութ մայրին առ գետեզեր — Ըզքաջանայ Տեառըն դիմէ
Ըզպաղպաջուն արկեալ ըզտեռ — Ուրար ոսկի զպարանոցէ,

Լուսարարին զհետ անկեալ փոյթ — Ըզհրեշտակաց տանելով հաց
Ուր ախտացեալ դէք ի մահ մօտ, — Եւ շուարեալ շուրջ կայ պարայած.

Քանզի յորդեալ հեղեղատին — Ծածկէ զշաւիղ յոր գնալ էր անկ.
Եւ հանդիպոյ՝ տանըն տիկնին — Տեսեալ ողբայ զառնըն վըտանկ.

Մահ յայտնապէս կայր առ դըրանն. — Օրհասականն ըղձիւք ըղձայր
Անուշ զթօշակըն հանգըստեան — Յաւերժական ուղղոյն պաշար:

Այն ինչ նա զոտըն բոկանայր — Յեզըր վախիցըն հեղեղատի
Ընդ հոսանս ջուրցն ուղխինաղայր — Արիաբար խաղալ հետի,

Յառաջ ձեպեալ անդ ասպետն այն — Եւ նախ երկիր պագեալ Փրկչին,
Ձիոյն սարեալ տայր առ քահանայն — Դառնայր ուրախ յիւր ընտանին:

Langte die Harfe hervor, und fuhr mit flüchtigen Fingern
Ueber die Saiten dahin, die herzerschütternden Lautes
Töneten. Still ward's d'rauf in dem Zelt, und es stockte der Odem
Allen umher in der Brust, da er jetzt den feierlichernsten,
Heiligen Sang begann im Klange der bebenden Saiten:
« Laut erbrauset der Sturm, und jagt tiefhangende Wolken
Ueber die finsteren Berge hinaus. Der laubige Hochwald
Trieft, der Giessbach rauscht, vom dauernden Regen geschwollen.
Sieh', dort ruhete nun, aus dem Sattel gestiegen, ein Ritter,
Nach ermüdendem Weidwerk aus. Von dem heiteren Antlitz
Strahlt ihm der Heldenmuth — aus den bläulichen Augen die Wahrheit,
Liebe, und Treu'. Er sah in die Fluthen: sie saus'ten, und braus'ten,
Eilten im Fluge dahin, und er dachte des fliehenden Lebens.
Aber der Rappe scharrt; laut winselt der gierige Schweisshund:
Denn kein Wild austrieb er im Forst, und der Ritter erhebt sich
Heim zu zieh'n in die Burg, wo sein die Liebenden harren.
Jetzt erreicht Geklingel sein Ohr. Von dem finsteren Wald her
Naht dem Ufer ein Priester des Herrn: im schimmernden Chorrock,
Und mit goldener Stol' an der Brust, nachschreitend dem Messner
Eilig, das Engelsbrot zu dem sterbenden Manne zu tragen.

Իսկ մերձ ի մուտս արեգական — Մինչ վարդագոյն երկին փայլէր
Ի գաւիթ անդըր պալատան — Երէցն ըղձին Թամբեալ բերէր․

Շընորհ ունէր նա ասպետին․ — Սա յուրաստ լեալ ասէր, չէ պարտ,
Զհոգւոյս փրկողն իմ կըրողին — Բառնալ զանարգ ըզբեռնըս արդ։

Եկեղեցւոյ բաժին ազատ — Դա եւ Ճախինն այն ապարակ,
Զի մի յանվայր վայրն՝ հեղեղատ — Կացցէ պաշտաման քում հակառակ։

Յայնժամ երէցն ասէր ցընա․ — « Հատուցէ քեզ Տէրն ողորմած
Իբր առ Նորին դու պաշտօնեայ՝ — Ազնիւ ասպետ, եղէր գըթած․

Ահա վկայէ հոգիս անսուտ — Զի եղիցիս դու երջանիկ․
Լէր դու գաղտնեացս այս խելամուտ — Եւ ի սըրտիդ կալջիր լռիկ.

Ըզկայսերացըն դու զհռովմայ — Դիցես ըզթագ սուրբ եւ պայծառ,
Որդիքդ ի գահ նստցին արքայ, — Փառքդ հընչեսցին յերկիր խապառ »։

Doch jetzt schaut er, voll Angst, umher: denn siehe, der Giessbach
Schwemmte den Steg aus dem Grund', und drüben aufjammert die Hausfrau:
Hörbar poche der Tod an der Thür', und es lechze der Gatte
Nach der Labung, die ihn auf die Reis' in die Ewigkeit stärke.
Schnell entblösst' er die Füss' an des Ufers felsigem Abhang,
Dort die rauschende Fluth kühn durch zu waten, entschlossen.
Aber der Ritter kam in Eile herüber, und both ihm —
Erst anbethend den Heiland der Welt, das gesattelte Reitross
An zu heiligem Dienst, und kehrte, vergnügt, zu den Seinen.
Als der Abend sank, und die Welt in rosigen Schimmer
Hüllete, sieh', da führte der Priester das Ross an dem Zügel
Ueber den Burghof her, und sagt'es dem Ritter mit Dank heim!
Aber er sprach: « Was dünkt dich? Nein, nicht diene diess Reitpferd
Fürder zu schnödem Gebrauch, das meinen Erlöser getragen:
Denn nun sey's der Kirche des Herrn mit dem Feld' an dem Weiher
Frei geschenkt, dass hinfort kein Wildbach mehr auf den Pfaden
Jenes unwirthbaren Raums, in dem heiligsten Amte dich hemme! »
D'rauf der Priester begann: « So verget' es dir Gott, der Erbarmer,
Edeler Herr, was du mit erbarmendem Sinn an dem Diener
Seiner Kirche gethan: stets mög' es dir glücklich ergehen!

Լռեաց զուսանն, եւ սքանչացեալ ակըմբահոյլըն դիւցազանց՝
Ակնարկէին ի կայսր, հասեալք յառաքինի գործոյն վերայ՝
Զոր գործեաց կոմսն Հաւաբերգոյ, եւ ցածութեամբ թաքուցանէր։
Այլ անդ ի վեր վաղեալ եւ գիրկս արկեալ սրբոյ ծերունւոյն պինդ՝
« Դու ինքն անշուշտ՝ ասէր, ո՛վ այր մեծարոյ, դու առ հեղեղին
Երեւեցար ընդ Տեառն իմում եւ օրհնեցեր զիս ի բարիս.
Հատուսցէ քեզ Բարձրեալն եւ աստ եւ անդ որ գալոցն է »։
Իսկ նա զճակատն ի Ռոդոլփեայ խոնարհեալ ձեռս ծածկէր զարտօսր,
Եւ ելեալ արտաքս երթայր ի մենաւորն հանգչել վրանի։
Հրաժարէին եւ քաջքն անդէն, զոր առ վաղուեան մահուն կըռիւ
Խրախուսէր կայսրն զըւարթ ակամբ եւ « Յուշ ձեզ այդն, ասէր,
Եւ զըժընդակ դաշտին ժողով, յուշ լիցի ձեզ եւ յաղթութիւն,
Քանզի նովաւ՝ ազատութիւն, բաղդ եւ հանգիստ եւ բաստ բազմաց »։
Եւ դիւցազունքն առհասարակ սրտագինըս գոչէին.
« Յաղթեսցուք մեք Աստուծով յարինըռուշտ ճակատ մարտին »։
Լռեաց խորանն իսպառ, եւ կայսր առաջ աչօք երթայր եւ գայր.

Ha, mir sagt es der Geist, und ich irre nicht — sey diess Geheimniss
Dir in den Tiefen des Herzens bewahrt: dir zieret die Scheitel
Würdig dereinst die Krone des heiligen, römischen Reiches!
Herrschen wird dein Geschlecht auf dem herrlichsten Thron' in die Zukunft
Endlos hin. Dein dauernder Ruhm erfüllet den Erdkreis! »
Endete so: da sah'n zugleich die versammelten Helden
Staunend, dem Kaiser in's Aug', und erkannten des Grafen von Habsburg
Fromme That enthüllt, die er stets verschwiegen voll Demuth.
Aber er stürzte herbei, und drückte mit heisser Umarmung
Lange den heiligen Greis an die Brust; dann rief er bewegt so:
« Wahrlich, du bist's, Ehrwürdiger, der an dem rauschenden Giessbach
Mir mit dem Herrn erschien, dort Glück und Segen zuspenden!
Möge die ewige Huld dir hier und dort ihn vergelten! »
Iener beugte die Stirn' auf Rudolphs Hand, ihm die Thränen
Bergend, und wankte hinaus in dem einsamen Helte zu ruhen.
Auch die Helden, gesammt, enteileten: denn an des Morgens
Tod- und lebenentscheidende Schlacht ermahnte der Kaiser
Sie mit erglühendem Aug': « O denket, » so sprach er, « des Morgens,
Der uns im eisernen Felde vereint. Im Sieg' ist die Freiheit,

Ապա նըստեալ ածէր զմըտաւ ըղջեղջեղուկ բաղդ մահացուաց·
Հայէր յերկինս հըլու, ու ի լոյս կանթղին ննջէր ի բազմակի։
Այլ զարհուրեալ հարթչէր ընդ հուպ, ոչ ի քուն գոլ եւ ոչ արթուն.
Քանզի որդեակն իւր սիրելի Արտման գեղով լի երկնայնով
Ծիծաղաղէմ առ մըթագգած երեւէր աչս իւր եւ ասէր·
« Ի տխրագին ժամանակի անջատաք, ո՜վ հայր, յիրերաց.
Ցաւք ինձ եղեն բաժին յերկրիս չաւիղ փըշուտ, եւ լացի գաղտ,
Անտես զըթոտ խնամոցն աջոյ՝ որ ի նպատակն ածէր վարձուց.
Հասի յայն կէտ. լուծաւ կենացս արդ առեղծուած յերկնից պարզ լոյս.
Խըցան աղբերք զառն արտասուաց, եւ հոգի զերծ կայ ի վայելս.
Մի տըխրիր հայր ի լըսել քում՝ ըզգուժկանըն մահաբեր,
Թէ յուղխ Հռենոս մեռաւ Արտման՝ ի վտանգելոց ձեպեալ փրկանս,
Եւ մահացուն պատեան հանգչի՝ Բասիլեանն արդ ի տաճարի,
Ուր մահարձան նըմա 'մբարձցի յաւերժական փառաց ի յուշ.
Մի տխրիր հայր. ես եւ իմ՝ մայր յանանց վայելս անդ մընամք քեզ,
Մինչեւ առ կէտն ու առ մէտ կըշռոյն արդար՝ զըտեալ հաւատարիմ՝

Wohlfahrt, Ruhe und Glück viel Tausender: denket des Sieges! »
Aber erschütternd braust' ein Ruf aus dem Munde der Helden:
« Ha, wir gedenken mit Gott zu erringen den Sieg in dem Blutfeld! »
Tief verstummte das einsame Zelt. Mit sinnenden Blicken
Ging der Kaiser umher; dann sass er wieder, und dachte
Noch des wechselnden Glücks der Sterblichen — sah mit Ergebung
Himmelempor, und entschlummert' im Schimmer der Lamp' auf dem Lehnstuhl.
Aber nicht lang, da fuhr er, bewegt, zusammen nicht wacht' er,
Schlummerte nicht) ihm stand, verklärt in himmlischer Schönheit,
Hartmann, der liebende Sohn, vor den nachtumhüllteten Augen,
Blickte lächelnd ihn an, und sprach: « In düsterem Zeitraum
Schieden wir, mein Vater! Mir ward auf dem irdischen Dornpfad
Jammer zu Theil, und ich weinete still: nicht gewahrend der Vorsicht
Mildumschlingende Hand, die allein zum lohnenden Ziel führt.
Ha, nun steh' ich am Ziel! Gelös't, und in himmlischer Klarheit
Liegen des Lebens Räthsel vor mir; versiegt ist der Thränen
Bitterer Quell, und es jauchzt die entfesselte Seele vor Wonn' auf.
Vater, traure nicht, wenn die Todesbothen dir künden:
« Hartmann starb in den Fluthen des Rheins: im rühmlichen Streben,

Անճառ փառացն ըղձիւք՝ եւ զու առ քոյսն հասցես յերջանիկ գիտ։
Այլ մինչ ի փառնց պատերազմին գյոյս յաղթութեան տեսցես ի ծուփ,
Յիշեա՛ զծերն Ալպեայ բարձանց եւ զուխտ քոյին բարեպաշտիկ »։
Ռատեաւ Ռոդոլփ ի բազմակէն, եւ ընդ ձեղուն զեռ խորանին
Կարծէր սլացիկ նշմարել լոյս եւ զողալով զնընէր ընդ մութն,
« Ահաւոր, զուէր, անուրջք, ահաւո՜ր եւ երկնային,
Կեայ իմն Արտման. կանթեղին լոյս պատրեաց զիս. տէ՛ր, պահեա՛ զնա ինձ »։
Զայս ասելով տարածանէր զարձեալ յակումբն ու ի քուն լինէր։
 Իսկ յՈդկարայ վրանէն մերժեալ էր խնդութիւն եւ զիւր սրտի.
Այն ինչ զարձեալ կայր յահազին պրակաց կաղնեաց Բադաւանի,
Հընչէր հծծիւն տըխուր ոգւոց եւ շառաչին զըժոխոց շուրջ,
Պակուցեալ զաչս հոլովէր, կափկափէին շրթունք յերեր.
Արկեալ զուսերն ի սարսռացեալ սեղանատախտն եւ նըստէր մօտ,
Զաղօտ աղօտ աչըրն շըրջեալ ի ձիթարդյծ պատրոյգն առկայծ։
Զի խաւարաւ գիշերայնով ի պրակ ձորոյն Բադաւանի
Միայնակ նախ երթեալ եւ ձի 'նդ բանակին հետըս փարեալ էր,

Retter zu seyn Unglücklicher! Schon ist die sterbliche Hülle,
Die ihn umgab, in dem Baseler Dom zu Grabe getragen,
Wo ihm ein Denkstein wird, auf immer zum ehrenden Zeichen.
Traure nicht. Ich, und die Mutter — wir harren dein in Gefilden
Ewigen Glücks, bis treuerfunden am Ziel, wo entscheidend
Sinket die Wag', und steigt, auch du, vor unsäglicher Wonne
Iauchzend, die Deinen ersiehst in seliger Wiedervereinung.
Denke der Alpenhöh'n, des Greises, und frommen Gelübdes,
Wenn in umdrängender Schlacht die Hoffnung des Sieges dir schwindet! »
Rudolph fuhr von dem Stuhl'. Er wähnte den fliehenden Schimmer
Noch an der Decke des Zeltes zu schau'n, und zitterte, starrend
Hin, den Gesichten der Nacht. Dann rief er : « Ein furchtbarer Traum war's:
Furchtbar und himmlisch zugleich! Mein Hartmann lebt, und mich täuschte
Nur der Lamp' aufflimmerndes Licht. O Herr, du bewahr' ihn! »
Sprach so; streckt' auf dem Lager sich aus, und entschlummerte wieder.
 Aber nicht herrschte die Ruh' und des Herzens Frieden in Ottgars
Zelt: denn eben kehrt' er zurück aus dem finsteren Eichwald
Götzendorfs, und er wähnete noch: die Schrecken der Hölle
Rauschten hinter ihm her, im Gezisch' unseliger Geister.

Ի սոսկալի մայրոջ կաղնեացըն միւսանգամ զրազդ հարցանել.
Վայր՝ ուր հանդէպ գեղջըն բնակիչք ահիւ ու անձկաւ անցանէին.
Զի անդուլ սօսափիւն ձայնից անտուստ լսելի լինէր:
Դրահոմիրա վառեալ քինու դժոխային՝ անդր առաքեաց վաղ
Երեւոյթ խաբեպատիր՝ ի խարդաւանս հէգ Ոգկարայ
Ի մըթութեան գիշերոյ շուրջ գալ ըզտեղեաւն եւ զՏէր փորձել.
Այլ յարագ արագ մատչելն ի ծառն՝ հրեշտակ նորին խնամող
Յաներեւոյթըս հանդիպեալ զճանապարհայն՝ ի սիրտն ազդէր.
Ա՜յ ուխտադրուժ, ա՞յդպէս մատնեալ քո զարարիչ տիեզերաց
Զանձն առ հայրըն ստութեանց նուիրես, եւ տաս զանմահ հոգիդ
Ի գրաւական անծանօթի եւ խաբուսիկ ինչ նըշանի.
Դարձիր յետս, եւ զանցելոց կենացդ յանցանս ապաշաւեա՛.
Ողորմի տէր առ զըղջացեալս, փութա՛ զնա հաշտ առնել ընդ քեզ »:
Զարհուրեցաւ Ոգկար յայն լուր. Ոգին անմահ ի ծառն հըպեալ
Եւ կարմրացայտ աչօք շեշտեալ՝ ցըրուեաց ըզզօրըս բանսարկուին.
Մեծապէս սօսափմամբ լըցին ըզվայրն ու անհետ եղեն:

Furchtbar rollte sein Aug', und seine geöffneten Lippen
Zitterten. Doch nun warf er das Schwert auf den drönenden Tisch hin,
Liess sich nieder, und starrte mit düsterem Blick' in des Oehldochts
Flimmernden Schein. Er eilte zuvor dem waldigen Thalgrund
Götzendorfs, im Grauen der Nacht, allein, und dem Heerweg
Fern' auf dem schnaubenden Ross entgegen: des dunkelen Schicksals
Ruf noch einmal dort an dem schauerumflossenen Eichbaum,
Dem die Bewohner des Dorfs nur mit Angst und Schrecken vorüber
Eileten: denn stets scholl Gezisch um ihn her, zu vernehmen.
Dorthin bannt' erst jüngst Drahomira, voll höllischer Arglist,
Einen täuschenden Spuk, zu verlocken den finsteren Ottgar,
Der um die Mitternacht hinwanderte, Gott zu versuchen.
Als er rasch auf den Baum losdrang, da trat ihm sein Engel
Unsichtbar in den Weg, und rief an das Herz ihm die Warnung:
« Wie, Verehrer des Herrn des Weltalls, Theuererlös'ter
Willst du dem Vater der Lüge dich weih'n — die unsterbliche Seel' ihm
Selbst verschreiben zum Pfand für trugverhüllende Zeichen?
Kehre zurück; bereue die Schuld des entflohenen Lebens.
Mild erbarmt sich der Herr des Reuigen: eil' ihn zu söhnen! »

Նա սոսկացեալ փութով դարձոյց ըզձին ի վրան անդր աճարեկ.
Եւ մինչ ի լոյս առկայծելոյ կանթեղին՝ յահ պատեալ նըստէր,
Ահա լըսէր դոտնաստրոփ վազ եւ արշաւ երիվարաց.
Ահա 'նդ հուպ եւ Կունեգունդ գայր բոցավառ աչօք, ու ասէ.
« Զէր անծանօթ ի քէն տարփանք օրիորդին քում սիրելւոյ
Ընդ Վալշտայնայ պերճ պատանւոյ որ աստանօր էլ ընդ սուր իւր,
Իսկ նէ ի խոր խոցեցաւ անդ: Ոչ եւս տեսցես դու զքո դստրիկ.
փախեաւ Եդուիկ. ո՜հ քոյրք ազնիւք ի յՈւնգարաց մենաստանէն
ինձ ծանուցին, թէ յանդորր անդ նա նուիրեաց զինքն ի հարսն երկնից
Եւ արդ քօղըն կուսական ծածկէ զճակատըն սիրունակ:
Անհընարին գործեցեր դու չարիս. չարիք մընան քեզ արդ »:
Ոդկար գլուխ ի վայր արկեալ եւ զարտասուսն ափով ծածկեալ
Մոռմռքէր ընդ յեզակարծ արկած զատերըն սիրելւոյ.
Ըզգօղանի հարեալ լըռէր: Նէ խըստագոյնըս բարբառէր.
« Ի մըթութեան գիշերւոյ եկեալ եմ ես այսր ի Դռեգնայ.
Զի՞ ո՞ ի լոյս տուընջեան զամօթ եւ զգայրոյթ իմ ոչ տեսանէր

Ottgar horchte bestürzt: denn zorngerötheten Blickes,
Sah der Unsterbliche jetzt nach dem Baume hinüber, und alsbald
Floh'n die finsteren Mächte davon. Ihr wildes Gezisch scholl
Laut um ihn her: er wandte das Ross, und im brausenden Eilflug
Kehrt' er heim in das Zelt, von Angst ergriffen, und Schauder.
Als er dort beim Scheine des mattaufflimmernden Lampen,
Sinnend, sass: da scholl ein Getrab anstürmender Rosse
Näher. Nicht lange, so stand Kunegunde, mit flammenden Blicken
Schauend, vor ihm, und sprach: « Hast du die verhüllete Neigung
Deiner so theuren Tochter dir, zu dem herrlichen Jüngling,
Wallstein, früher gekannt, der jüngst in's eigene Schwert sank,
Und ihr Herz verwundet im Zorn? Nie siehst du sie wieder.
Hedwig entfloh. Aus dem Kloster, ach, der ad'ligen Nonnen
Drüben im Ungerland kam mir die Kunde gesendet:
Eine Braut des Herrn, will sie in erkorener Stille
Leben hinfort. Schon hüllt ihr die liebliche Stirne der Schleier.
Schrecklicher, dein Werk ist's: gar viel des Schlimmen erlebst du! »
Ottgar beugte das Haupt, und barg die thränenden Augen
Schnell mit den Händen vor ihr: von dem leise geahneten Schicksal

Ընդ փախուստ քաջի Բոհեմ զօրու՝ զոր ինքն խակ նոցին պետ
Ի յաղթութեանն հասեալ պաշտօն՝ յետս ընդ կրունկըն նըշանջէր,
Աւա՜ղ ինձ, զի այգպիսւոյ վատի արանց եղէ ի կին » ։
« Կարկեա՛ց կին դու, գոչեաց արքայն ցասմամբ. մինչ քաջ եւ խրոխտ եղէ,
Վատացայ լոկ յորժամ զիջայ ի կամս կընոջ, չարեացս առթի,
Ո՜հ անհամբոյր ամուսնութեան արգասիք աղխաբերք ։
Այլ արդ ի բաց թող ըզսնոտի զժտութիւնդ այդ. ահեղ է պահս.
Եւ պատերազմն առ դուրըս կայ ։ փութա՛ 'Նյապաղ երթ ի Պրակա,
Առաքեցից քեզ զունդ ընտիր յուղեկցութիւն, և տէր ընդ քեզ.
Կունեգունդ, յո՛ւշ քեզ, որդւոց խոց ես մայր, վեհ քեզ կոչք այդ ։
Բարւոք խնամեա՛ զիմ աղխս. բազում վըշտաց համբերի ես
Առ սէր զաւակըս քաղցունեոյ մինչդեռ չըկայր որդի 'նձ ժառանգ,
Ո՜ գիտէ, քանի՞ չըքնաղ ասւրք դարձեալ մեզ փթըթեսցին
Յորժամ դարձայց ի մարտէս, թէ յաղթութեամբ եւեթ դարձայց » ։
Զայս ասացեալ յարեաւ, ի բաց դարձոյց զերեսս ի կընոջէն
Որ արտասուս ընդ ծնօտն հոսեալ եւ նախապատ լինէր յանձին.

Seines theuersten Kindes bewegt. Er bebte, verstummend.
Doch sie sprach von neuem mit Hohn: « Im nächtlichen Grauen
Komm ich von Drösing heran: denn wer gewahrt' in des Tages-
Licht nicht die Scham und die heimliche Wuth mir im glühenden Antlitz
Ueber die Flucht des Böhmenheers — des tapfersten Heeres,
Das sein Hort: weh mir, dass ich Gattinn dem Feigen geworden,
Fliehen hiess in dem Augenblick des entschiedenen Sieges! »
« Weib, halt ein! » schrie laut der Empörete, « kühn und entschlossen
War ich mein Leben lang, und feig ertrug ich als Gatte
Nur, die Launen des Weibs, das mir zum Iammer zu Theil ward.
Ach, die unfriedliche Ehe gebiert die herbste der Qualen!
Doch für jetzo hinweg mit eitlem Gezänke. Zu furchtbar
Dränget der Augenblick: nicht fern ist die Stunde der Schlacht mehr.
Fort noch heute g'en Prag! Ich sende dir muthige Scharen
Zum Geleit. Mit dir sey Gott! Kunegunde die Mutter
Meiner Kinder bist du! Erhabenes liegt in den Worten.
Halte sie wohl, die theuern! Gar viel ertrug ich des Schlimmen
Mit Geduld, um die Kindlein: denn mir fehlte der Sohn noch.
Ha, dass vielleicht, so mir die Heimkehr wird aus dem Kriegszug,

Թէ ոչ եւս էր տեսանելոց ըզնա · չիշխեաց ասել « Ողջ կաց » ·
Նըստաւ ի ձի հեծելօք շուրջ առեալ ի պերճն երթալ Պրակա ·
Ոգկար խռովեալ մտօք շըրջէր յաղօտ վրանին ի վեր եւ վայր ·
Եւ ժամանակըն անցեալք սահեալ նըկարէին յուշի նորա
Մերթ պայծառք հաճոյականք, եւ մերթ մըթինք եւ ահաւորք ·
Ո՜վ տխրութիւն ծանր՝ որ անկաւ զոգւովն ի մայըրս գիշերոյն,
Մածնուին ամպք սըգոյ, եւ շուրջ ամայացեալ թըւէր աշխարհս ·
Հառաչելով մերթ ըզբազուկ ձըգէր հրաման խնըն տալով
Զի գծածկեալն եւ ըզլուծեալն հանցէ արտաքըս գերեզման ·
Եւ մերթ շըթամբք յերեր հծծէր անուանս եւ վայրս յաղջամուղջս անգ,
Ըղձայր աղերս ու աղու բանիւք ի ծունր անկեալ եւ խոնարհեալ
Ի միոյ միոյ հայցել ըզցանկալին ներողութիւն ·
Եւ իբրեւ չէր որ պատասխան տայր, լուռ եւ համր էր ամենայն,
Եւ ոչ մի կարեկցութեան բարբառ յերկրէ անտի լըսիւր,
Ամբարձ ապա զահաձայնեաց աչըքն յերկինս արտասուելով,
Եւ կայր յապուշ յերկրպայս յերկար, մինչեւ արկեալ ըզձեռս լուծեալս

Schönere Tag' uns blüh'n! Nur als Sieger siehst du mich wieder. »
Sagt' es, und stand, verwendeten Blicks. Ihr rollten die Thränen
Ueber die Wangen herab: denn tief vorahnte sie's: nimmer
Werde sie ihn mehr seh'n; doch scholl kein freundliches « Leb' wohl! »
Ihr von den Lippen; sie ging, und schwang sich auf's Ross, von den Reitern
Dicht umschart, bald Prag, die herrliche Stadt zu erreichen.
Heftig bewegt, ging Ottgar jetzt im dämmernden Zeltraum
Auf und nieder, und sann. Schon längstentflohene Zeiten
Kehreten ihm, nun lieblich und hell, nun nächtlich und furchtbar,
Wieder im Bilde zurück, und ach, unendliche Wehmuth
Fasste sein Herz, als dort die dämmernde Helle des Nachtgrau'ns
Trauergewölk verschlang, und um ihn, verödet, die Welt lag!
Stöhnend streckt' er zuweilen den Arm weit vor, und ersehnte
Heiss, zu entreissen dem Grab, was solches im Moder bedeckt hielt.
Seine Lippen bewegten sich dann, und lispelten Nahmen,
Ort, und Zeit umher in die Dämmerung. Willigen Herzens,
Wär' er mit flehendem Wort vor Dem, und vor Jenem gesunken
Auf die Knie', zu erringen den Wink ersehnter Verzeihung.
Doch, als Niemand war, der Antwort gab, und auf Erden

Եւ ըզգլուխ կորացուցեալ, ի ծունր իջեալ եւ աղերսէր.
« Աստուած իմ, մի մըտաներ ի դատաստան ընդ եղկելւոյս,
Զի չուրջ հեղան մեղք իմ զինեւ որպէս հոսանք ուղխից լերանց
Որպէս տարափք վիժից վիմաց յափափայից փախից բարձանց.
Ո՞ փրկեսցէ ի ցասմանէ քումէ զիս՝ Տէր ամենակալ,
Թէ ոչ քաւիչըն յանցանաց ավ եղիցի եւ յիս գըթած։
Այլ գըթութիւն զոր ես առ մարդ ըլացայ՝ յիս՝ յայր խիստ ու ապառում. . .
Ամբարձ զաջ քո աչաւոր, հար պատժեա զիս, զի մեղայ յոյժ։ —
Այլ սիրես դու զհաշտութիւն, Տէր ողորմած ես եւ գըթած
Առ զըղջացեալ սիրտ՝ որ յերկրի զգաստացեալ քեզ խոնարհիցի,
Կեամ եւ ես զեռ. խոստովանիմ ինքնին զաչեղս ահիր առ նոյն,
Զի ի բարձունս հըպարտ զաչու ի վտանգաւոր կար սերձութեան,
Թակարգեալ ի կնամարգի շողոքանաց զիւթիչ հրապոյրս,
Ամբարտաւան եւ զոռոզ սիրտ կանգնեցի, փոյթ եւ ի տուփանս.
Կամիմ քաւել արդ ըզմեղանս իմ, եթէ կեանս ինձ շնորհիցես։
Զոր օրինակ երբեմն յաղթող մինչեւ ի ծովն արեւելից

Alles, verstummt, und erstarrt, auf immer jegliches Mitleid
Ihm zu versagen schien: da hob er die furchtsamen Augen
Auf zu dem Himmel, und sah durch leis' aufquellende Zähren,
Zweifelnd, hin, bis jetzt, erschüttert, die bebenden Händ' er
Faltete; dann, gesunkenen Haupts, auf die Kniee sich werfend,
Also begann: « O Herr, nicht geh' in's Gericht mit mir Armen!
Ringsum drängt mich die Schuld, wie die Fluthen des schwellenden Bergstroms,
Und einstürzender Berge Geröll. Wo find' ich Errettung
Einst vor deinem Zorn, Allmächtiger, wo, so dem Schuldner
Nur vergeltendes Recht, nicht auch Erbarmen zu Theil wird?
Doch Erbarmen mit mir, das, hart-und eiserngesinnet,
Ich nicht übt' an den Menschen — ein Mensch? Erhebe die Hand nur,
Furchtbarer, straf' mich: denn ich hab' es verschuldet, auf immer!
Dennoch nimmst du die Sühne noch an; barmherzig und gnädig
Bist du, o Herr, wenn reuig das Herz auf der irdischen Bahn noch,
Schmerzdurchdrungen, sie beut! Noch wandl' ich auf ihr. Im Bewusstseyn
Schrecklichen Frevels, zu dem auf der schwindelnden Höhe des Thrones
Mich die gefährliche Macht und der feiggesinnten Schmeichler
Zauberruf hinriss, und des ungebändigten Herzens

Ըզսուրբ խաչին տարեալ նշան՝ անհաւատից մոլորելոց
Ես ինքն եղէ քարոզ անուանդ, ջերմ հաւատով եւ ուղղութեամբ.
Որպէս անդ սիրտս առ ամենայն բարի ձգտեալ ի վեր բաղխէր
Եւ կայթէին զինեւ տարերք, քանզի անդորր էր ոգիս իմ.
Այնպէս կամիմ այսուհետեւ նոր նորոգեալ մարդ՝ կեալ ի քեզ,
Եւ ուղղութեամբ առաջի քո գնալ վարեալ յաջոյ քումէ.
Այլ մերկանայ տիւ արդ. եւ ինձ հարկ է 'նդդէմ կալ ոսոխի,
Որ անգոսնեաց զիս եւ առեաց, եւ յարուցեալ զայ յոխ եւ վրէժ.
Ներեմ նմա, քանզի յինէն զայդ պահանջես իմս Փրկիչ.
Այլ յարդար մարտ՝ զոր իրաւունք գահու եւ սէր ազգիս սրբէ,
Կացից նմին ընդդիմամարտ, յանձն ի քեզ զիմս արարեալ բաղդ.
Շնորհեա ինձ Տէր յաղթութիւն. այլ մի իմ, քոյ եղիցին կամք »:
Զանպատումն զօրութիւն այնմ՝ որ սփռէ գթոյ ճաճանչ՝
Տօնէին յայնժամ երկինք. զերկիր վառէր այգ ծիրանի.

Ehrgeiz, Stolz, und begierliche Gluth stets mächtiger drängte,
Will ich, lässt du mich leben, o Herr, mit reuigem Herzen
Sühnen die Schuld! Wie ich einst des Kreuzes heiliges Zeichen,
Siegend, zur Ostsee trug, und dort den verwilderten Heiden
Deines Nahmens Ruhm verkündigte, eifernd für Wahrheit,
Tugend, und Recht; wie dort das Herz bei jeglichem Guten
Höher im Busen mir schlug, und ringsum die heitere Schöpfung
Lächelte, weil in der Brust noch Frieden mir wohnte: so will ich,
Ein erneuerter Mensch, hinfort dir leben, und würdig
Wandeln vor dir, geschirmt von deiner allmächtigen Rechten!
Ha, der Morgen graut! Ich stehe g'en über den Feinden:
Ienem zumal, der mich verhöhnete — mir in dem Herzen
Glühenden Hass und Rachsucht weckt'. Ich verzeih' ihm: du heischest
Solches, mein Heiland, von mir zum Gehorsam. Im redlichen Kampf nur,
Den des Throns erworbenes Recht und die Liebe der Völker
Heiliget, will ich ihm steh'n, und anheim dir stellen mein Schicksal.
Gieb mir den Sieg, Herr! Doch nicht mein — dein Wille geschehe! »
  Aber die Himmlischen feierten nun der unendlichen Allmacht
Huldausstrahlenden Wink. Auf Erden erglühte das Frühroth.

ՌՈԴՈԼՓ

ՀԱՒԲԵՐԴՈՒՆԻ

RUDOLPH

VON HABSBURG

ԵՐԳ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Մրցէր յերկրայս այգ ընդ ցայգու, եւ յաշալուրջըս սփրալիս
Տակաւին հանգչէր երկիր յանդորրաւէտ պատեալ ի քուն.
Մինչ խստասիրտքըն Ծովասարք դարձ ի բանակ անդր առնէին.
Եւ յուղւոջ որ յԱյգերլուրն հատաւէտ ձըգեալ 'ի վեր
Յափափայն գառնայ սարակ՝ ուր կանգնի բարձր Ագռաւաքար,
Ժամս երիս կային եղբարքն հաւանք յահեղ ի գործ վրիժուց,

EILFTER GESANG

Zweifelnd rang der Tag mit der Nacht, und im schauernden Zwielicht
Ruhte die Erde, noch rings vom holden Schlummer umfangen.
Als das schreckliche Paar der Meerenberger in's Lager
Kehrete. Dort an dem Pfad, der, längs dem duftenden Weinberg,
Immer höher sich hebt, und erst an dem felsigen Hügel
Schwindet, von welchem der Rabenstein empor in die Luft ragt,

Դրժնէհայեաց ակնարկելով մերթ յիրար մերթ ի կախաղան,
Եւ հանդոյն փայլատականց յաղջամղջին խոր գիշերաց
Ի ցասմնալից սրտիցն ի դուրս արձակէին շանթք ընդ աչկունս։
Ուր ուրեմն բարբառէր եւ առ կրսերն երէցն ասէր.
« Արդ ծագէ առաւօտ. ես աւադիկ կազմ եւ պատրաստ կամ.
Աւասիկ եւ յառաջապահքն յորոց զատաքս՝ բացասեալ կան »։
Առ որ զիջեալ միւսն ասէր. « Ձեւ եւս ի գլուխ ել գործն աՀաւոր՝
Յորմէ սոսկամ, չեւ եւս մատեաք առ Թըշնամին պըսակաւոր՝
Զոր սպանանել յազատ ի դաշտ՝ ի տաճարին երդուայ սրբում,
Կամ յանդորրու սենեկին՝ զիարդ եւ բաղդ յաջողեսցէն։
Հուր վրիժուց յիս վառեալ ու եռանդն անարգ՝ ստիպէ յայն իրր յարժանն.
Այլ մի ցասնուր, սիրուն եղբայր, չիցէ՞ մեզ մարթ ներել նըմա »։
— « Եւ երր իշխես, միւսըն կրկնեաց զայրացեալ, բան զայդ զըզուելի՝
Ներումն՝ առնուլ ի բերան. ոչ տեսանես զծառդ անիծից,
Կամ թէ զնըման նըմին՝ — զոր զեւք զըժոխանիւթ իմն Հըմայիւք
Ի զկըծանս ինձ ընդ օդս ածին —, յորմէ եղբայրն իմ քաջըզգօն

Standen die Rachebrüder, vereint zu entsetzlichen Thaten,
Schon drei Stunden lang, und sah'n mit finsteren Blicken
Bald nach dem Hochgericht, bald einer in's Auge dem andern,
Das, wie der Blitz aufflammt in dem Nachtgrau'n, öfters erglühte
Vor dem gewaltigen Drang des grimmgesättigten Herzens.
Aber da sprach der ältere so zu dem jüngeren Bruder:
« Siehe, der Morgen graut: schon bin ich gefasst, und entschlossen!
Komm: die Vorhuth harrt, der wir uns entzogen. » Und jener
Sagt', erwecht. « Noch ist das Entsetzliche, dem ich erbebe,
Nicht gescheh'n; noch stehen wir fern dem gekröneten Gegner,
Den ich zu morden schwur in der offenen Schlacht, in des Tempels
Heiligthum, und in dem stillen Gemach, wie solches das Glück mir
Günstig beut. Bereit ist die Rach', und der schändlichste Frevel
Heischt sie mit Recht, und doch — ich könnt' ihm verzeihen! Nicht zürne
Theuer, mir ob dem Wort', er sinkt: ich könnt' ihm verzeihen! »
« Wie, » so entgegnete jener voll Wuth, « das verhassteste Wort kam
Dir von den Lippen: verzeih'n? Sieh' hin nach dem Baume des Fluches!
Ist er nicht jenem gleich — vielleicht dass die höllischen Mächt' ihn,
Mir zum Hohn, durch Zaubergewalt herführten im Luftraum,

Կախեալ անպարտըն Սայֆրիդ՝ ստն ընդ գլուխ տոռնեալ զաւուրս երիս
Զարաւ կործաւ, եւ դու ներես... Սպանից ըզքեզ թէ իշխես զայդ»։
'Նա լուռ եկաց, եւ դարձան փոյթ յարխախումբ յառաջապահս։
Յեզերաց երկրապարփակ երկնից՝ ի դրանցն արեւելից
Երեւեալ վարդակարմիրն արեգական փափագելւոյ
Ծածկէր անդէն ըզզուարթագին դէմսն ի մըրուր մգձկոտ ամպոց,
Մինչեւ ի պերճըն կէտ լինել ժաման՝ ի դուռն երեկորին։
Շախինդն եւ շտապ եւ յամր աղմուկ արդ զերկոսեան բանակս յուզէր.
Եւ փութային քարոզք այսր անդր՝ ազդ առ վարիչս առնել զօրուն
Ըզզասակարգ վաշտուց վաշտուց՝ որպէս նոււն պետըըն պատուէր։
Յոխորտ ճամբարն Ոդկարայ 'նդ մութն ի վեր Սպան լեառըն ճակատէր.
Տարածեալ թեւս հըզօրս յՈւռեաց գիւղ յաջ, ընդ ձախ ցըԴուռնկերտ,
Եւ բաժանէր ի վեց առաջս՝ ըզթըշնամեօք շրջապատեալ.
Աստ ընդ Բոհեմ զօրուն խըմբեալ գունդք Սաքսոնաց եւ Բոյարաց,
Ընդ Մորաւաց անդ Ռուսք եւ Լեհք եւ Կումբրինգաց վառեալ ջոկատք.
Քանզի երէցն Ազմար՝ անդ կազմ ի պատրաստ կայր ընտիր մարտկօք,

Weh', auf dem der edelgesinnete Bruder, mein Seyfried,
Schuldlos litt; das Haupt zu den Füssen gebunden, nach dreimal
Schrecklichen Tagen verblich? Verzeih'n? Ich erwürge dich, thust du's! »
Iener verstummte vor ihm, und sie kehrten mit eilenden Schritten
Wieder zurück zur Heldenschar der erlesenen Vorhuth.

Drüben in Osten entstieg des erd'umrandenden Himmels
Tiefen, gehüllt in Rosengluth, die ersehnete Sonne;
Aber sie schwand dann bald, von düsteren Wolken verschlungen,
Wieder, und zeigt' auch heute nicht mehr ihr freundliches Antlitz,
Bis sie vom Abendthor erreicht das herrliche Ziel sah!
Schon war drängende Hast und dumpfes Gemurmel im Lager
Beider Gegner erwacht; schon sprengten die Herolde hierhin,
Dorthin fort: des Heers Aufstellung den schaltenden Amtnern [1])
Kund zu thun, wie solche zuvor der Herrscher gebothen.
Ottgars dräuende Macht hob weit an dem dunkelen Spannberg
Sich empor: ausdehnend rechts den mächtigen Flügel
Bis g'en Weidendorf, und links an die Marken von Dürnkrut,
Also geordnet in sechs Heersäulen, dem Feind zu begegnen:
Hier an das Böhmen-Volk der Sachs und der Bayer, und drüben

Մինչդեռ Լեւպոլտ ըզչարեալ խռովքն ի բաց դարձաւ յաստան։
Իսկ կայսերըն բանակ որպէս երէկ առ պատուարօքն
Յեռակարգ տրոհեալ ի թեւս ճակատէր դէմ ախոյենին ,
Եւ չեւ ի մարտ մըտեալ խորհէր խոստովանել ու ապաշաւել։
Բազմաց անկեալ ի խնդիր « Ո՞ւր է , աւէին հովիւն հոգւոց
Զօշխարին մոլորելոյ լըսել վրիպանս եւ արձակել
Անուամբն Տեառն։ Ո՜հ , զի՜ ահեղ է մեռանել անապաշխար »։
Եւ անդէն տեսանէին խորան յաղօտ բանակին մէջ
Եւ պաշտօնեայն նըստեալ ի դատ ակն ի գետին եւ բարեգութ։
Եւ անխոնարհըն երբեմն՝ ի հող խոնարհէին ծունր արգ կամաւ․
Զօրացեալք օրհնութեամբ զորքըն խոստովան լինէին
Ոչ յերկրաւոր դրդեալ հարկէ՝ այլ ի սրտէ՝ զըղջմամբ ըզմեղս ,
Լըսէին խրատս ըզգուշականս եւ քաջալերս հոգեկեցոյցս ,
Եւ զարձակումն աստուածային՝ որ լուծանէրն եւ ոչ կապէր
Ըզգլխեալսն ի ճանապարհ ողորմութեան եւ փրկութեան
Ըստ ինքնուսոյց Տեառըն բանի՝ որ եւ մարդոյ կար երկնային։

Reuss' und Pol' an jenes aus Mähren, gereiht, mit den Scharen,
Kunrings: denn ihm verharrete dort mit erlesenen Kriegern
Noch zu getreulichem Dienst Hadmar, der ältere; Leutold
Nur, aufflammenden Zorns, zog jüngst mit den Seinen zur Burg heim.
Aber wie gestern am Wall, zu drei Heersäulen geordnet,
Standen des Kaisers Reih'n entgegen den Reihen der Gegner,
Und gedachten anjetzt vor dem Kampf, der Beicht und des Busswerks:
Denn manch tapferer Krieger sprach: « Wo weilt in des Heeres
Ordnung der Seelenhirt, der von dem verirreten Schäflein
Höre die Sünden bekannt, und im Nahmen des Herrn es entlasse,
Ledig der Schuld? Ach, furchtbar wär's, in solcher zu scheiden! »
Bald bewahrt' er den Wink, der ihm das ragende Zelt wies,
Wo in dem dämmernden Raum, mit niedergehefteten Augen,
Heiligen Mitleids voll, der Priester des Herrn zu Gericht sass.
Willig senkten vor ihm auch sonst unwillige Knie' sich
Jetzt in den Staub, und, segengestärkt, bekannten die Krieger,
Nicht durch Erdenmacht — nein, nur von dem Herzen getrieben,
Was sie gefehlt, und bereut; sie höreten warnende Lehren;
Hörten erfreuenden Trost, und zuletzt den göttlichen Ausspruch,

Եւ ի միում միում թեւոյն՝ ուղղեալ սեղան քահանայից
Կատարելով զխորհուրդըն սուրբ՝ ըզկենարարըն բաշխէին հաց։
Երիցս ըզկուրծըս բախելով ընդ հեզամիտն հարիւրապետ,
« Տէ՛ր, չեմ բաւական զի 'նդ իմս յարկաւս մտցես այսօր,
Այլ ասա՛ բանիւ միով՝ եւ փրկութիւն լիցի հոգւոյս »։
Եւ նուացեալ զօրացն ուրախք յիւրաքանչիւր դառնային կարգ։
Շըշուկ ի վաշտն արդ զօրանայր, ձայնէր ասպետ առ զինակիր
Հայել զնըննել ըզթամբ եւ թանգ, ըզսանձ, նա եւ զասպանդակ
Եթէ իցեն կուռ եւ սարեալք առ բըռնավէգ ճակատամարտ,
Մինչ ինքն ածէր ըզսաղաւարտն ըզկըզակաւ երիզապինդ,
Եւ մերկացեալ ըզսուր՝ փորձէր բըթովն ըզսայր հըպեալ հեզիկ.
Եւ միւսանգամ հետազօտեալ խնամով ըզսարս երիվարին
Բուռն ըզսանձից հարկանէր ճարպ, եւ առ համհարզըն բարբառէր.
« Ողջոյն յինէն տուր իմոյ հօր ալեւորի, թէ Հօրն երկնից
Կամք իցեն ինձ վիրաւոր ի թըշնամւոյ անկանել աստ,
Ընդ հուպ հասցէ առ ի կըքեալ նա հասակաւ ի գերեզման »։

Der sie lös'te, nicht band, auf dem Wege des Heils und Erbarmens,
Wie es der Meister gelehrt, der Menschen des Himmels Gewalt gab.
D'rauf, als dort vor jeder der drei Heersäulen ein Priester
Würdig die Feier des Abendmahls vollendete, traten
Sie zu dem Tische des Herrn, und empfingen die Speise der Seelen,
Klopfend die Brust dreimal mit des Kapernaonischen Hauptmanns
Demuthssinn, der sprach: « O Herr, nicht würdig erkenn' ich
Mich, dass du einkehrst heute bei mir; doch, sprichst du ein Wort nur,
Wird die Seele gesund! » Und mit Freudigkeit stellten die Scharen
Wieder sich auf in Reih'n, gestärkt in heiliger Andacht. [2])

Ietzt erwacht' in dem Lager Getös'. Der edele Ritter
Rief den Knappen herbei, dass er säh' nach dem Zaum' und dem Bügel —
Nach dem Sattel und Gurt: ob jedes dem mächtigen Schlachtdrang
Haltbar sich wies'? da er selbst den Helm mit dem Riemen am Kinn sich
Festigte; dann sein gutes Schwert, aus der Scheide gezogen,
Prüfte, die Schneid' entlang, mit sanfthingleitendem Daumen.
D'rauf noch einmal umwandelnd das Ross mit forschenden Blicken,
Fasst' er hurtig den Zaum, und sagte zu seinem Getreuen:
« Grüss' mir den grauenden Vater daheim, so der Vater im Himmel

Միւսն ասէր . « Քաջ միտ դիր , եթէ անկայց ի ճակատու՝
Եւ դու դարձ արասցես , բեր ողջոյնս առ քոյրն իմ տար պարկեշտ՝
ի մանկութեան տիոց հաղորդք էաք առ սէր եւ վիշտ միմեանց » :
Իսկ այլ ոմըն զարբանեակն հանեալ ի կողմըն պատուիրէր .
« Թէ առ բերդաւն անցանիցես՝ յորում բամբիշըն շնորհագեղ
Երդուաւ ինձ կալ հաւատարիմ , քո իսկ գոլով ականատես՝
Թէ ի՛բր ըզհետ անջատելոյս կառուցեալ աչս ի պատշգամէն
Հեզոյր արտօսր , եւ ի հեռուստ տայր նշան ջինջ Թաշկինակաւ .
Ասա՛ նըմա , թէ մինչ ի մահ հաւատարիմ կեցի ես քեզ » :
Իսկ կանամբին ընդելասէր ոչ անթախիծ զիմօք ասէր .
« Թէ յասպետէդ զըրկեալ՝ դարձցիս ի հայրենիսն համբաւաւէտ՝
Համհարզ քաջ , տուր յինէն ողջոյն առ անըռման իմ ի կանայս
Եւ առ մանկունս իմ գեղափթիթըս տուր ողջոյն խանդաղակաթ .
Պահեսցէ ինձ լըծակիցն իմ ըզխոստումըն զոր երդուաւ
Եւ մայրական խնամով յերկիւղ Տեառըն սնուսցէ զմանկտին կայտառ ,
Եւ յանըստգիւտ ճշմարտութեան շաւիղս . լիցին արք կատարեալք ,

Mich in dem Waffengemeng, durchbohrt vom feindlichen Eisen,
Abruft: bald nachfolgt, vom Alter gebeugt, er in's Grab mir! »
Aber ein Anderer sprach: « Merk' auf! So ich niedergeworfen
Lieg' auf dem Feld', und du kehrst, so bringe der Grüsse viel tausend'
Dort der Schwester noch, der redlichen: denn in dem Leben
Theilten wir Freud' und Leid, vereint von der zartesten Iugend! »
Wieder ein Anderer trat mit dem Knappen beiseit', und geboth ihm:
« Kömmst du vorüber die Burg, wo mir, holdselig, das Fräulein
Treue Minne gelobt: oft hast du es selber gesehen,
Wie von dem Erker sie mir, dem Scheidenden, thränenden Blickes,
Nachsah, dann noch fern mit dem schimmernden Tuche mir winkte:
O so sprich: « Treu bis in den Tod ihr weiht' ich das Leben!
Doch der fromme Gemahl begann mit sinnendem Ernst so:
« Redlicher, kehrst du, des Ritters beraubt, zur rühmlichen Heimath:
Grüsse die beste der Frau'n und die holdaufblühenden Kinder
Alle mit herzlichem Wort! Die so edelgesinnete Gattinn
Solle mir ja bewahren den Eid, und die munteren Iungen,
Sorgend mit Mutterhuld, zur Furcht des Herrn auf der Wahrheit
Hellem Pfad' erzieh'n, dass sie Männer in jeglichem Sinne

Զի խընդութեամբ գտցուք զիրեար դէմ յանդիման տեսան Աստուծոյ »։
Այսպէս ի մարտ մահու կազմեալ զանձինս շտապաւ ասպետքն արիք
